ՀԱՂՈՐԴՈՒՄ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ

# ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄՆՈՒՄ Է ԼԱՐՎԱԾ

Արցախում գործադուլը շարունակվում է: Մարզը դեռ շրջափակման մեջ է: Երեք օր է՝ Երևան - Ստեփանակերտ ավտոբուսային երթուղին սկսել է աշխատել: Ավտոբուսներին ուղեկցում են ներքին զորքերի ստորաբաժանումների զինվորները: Ամեն օր, չնայած ճանապարհների վտանգավորությանը, ավտոմեքենաներով բանջարեղեն և միրգ է առաքվում մարզկենտրոնի առևտրական կազմակերպություններին և տնտեսությունների մասնագիտացված խանութներին: Սկսված է խաղողի այգիների ընտրովի քաղը: Կարգի են բերվում խաղողի մթերման կետերը:

Այս օրերին մարզի շրջանների և քաղաքների ղեկավարությունը հանդիպումներ է ունենում տնտեսական կազմակերպությունների և աշխատանքային կոլեկտիվների հետ, ելք են փնտրում մարզը ստեղծված ճգնաժամային վիճակից դուրս բերելու համար:

Առանձված միտինգներում ավելացել են շինարարներին ուղղված կոչերը աշխատանքի դուրս գալու, բնակարաններ կառուցելու, գյուղերի վերանորոգման վերաբերյալ: Ձմեռը մոտ է, իսկ մարզկենտրոնում դեռևս շուրջ 20.000 փախստականներ չունեն հիմնական օթևան: Նրանք հիմնականում տեղավորված են ոչ հարմարավետ հիմնարկային շենքերում, հանրակացարաններում: «Ամարաս» գրության կազմակերպության առաջարկով Ստեփանակերտ քաղաքում սկսել են աշխատել անվճար երկու երթուղային ավտոբուսներ, գրոսայգիների մանկական ատրակցիոնները: «Ամարաս» ֆինանսական օգնություն է ցույց տալիս կարիքավոր ընտանիքներին: Ծանր վիճակի մեջ գտնվող փախստականների համար ստեղծվել է անվճար ճաշարան, ուր ապահովվում է նրանց սնունդը:

Ադրբեջանի ինֆորմացիայի միջոցները շարունակում են «քարկոծել» ղարաբաղյան շարժումը, նրա գաղափարը, լուտանքներ թափել մարզի հասարակայնության հասցեին, որը խիստ լարվածություն է առաջ բերում արցախցիների շրջանում, ծանրացնելով նրանց առանց այդ էլ ծանր հոգեկան վիճակը: Մարզը ապրումների, սպասումների ու տագնապների մեջ է:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)